

ՔԵՆԸ

Գեղին առաջակալներեն Հաճի Ներսես աղան բացօթյա խնջույք մը կուտար Ջերման, գետափյա քարայրներուն առաջքը:

Անվան տոնակատարություն և նման բացառիկ պատճառ մը չկար:

Ձմեռ էր, անգործության եղանակ, գյուղին աղաները սենյակները հավաքվելով նստելեն ձանձրացեր էին: Տեղ մը երթալ, կեր ու խում մը ընել կուգէին, ու Հաճի Ներսես աղան ընդունէր էր՝ ծախքովը հացկերույթ մը տալու իր բարեկամներուն:

Գյուղը, իր դաշտովն ու շրջակա բլուրներովը, ծածկված էր ձյունով, բայց այգիները մոտավորապես ժամ մը հեռու էին՝ ձյուն չկար: Հոն տաք կրներ: Բարձր լեռները կարգիլէին հովերը, արևը ախորժելի էր, գետիները չոր էին: Բարեկենդանի շաբթուն էր:

Երիտասարդներ չկային հրավիրյալներուն մեջ: Ամենքն ալ տարեց էին: Երկրաբանական հին շրջաններուն կազմված կարգով քարայրներեն մեկուն առաջքը տարածած էին օթոցները, ու ծալլապատիկ, շուրջանակի նստած էին:

Հաճի Ներսես աղան առտուն կանուխ ծառան դրկա՛ծ, կարգադրություններ ընել տված էր: Իր ու գյուղին աղաներուն արբանյակը՝ երկայն Ալիքսանն ալ խոհարար կարգած էր: Բեմկիներու ու հունապենիներու մացառուտքին մոտ օճախները շինած էին անոնք, ու սաներուն մեջ կերակուրները կեփէին: Մուխերը քարայրներեն վեր կբարձրանային, ու, ուղղություննին փոխելով, գետին դեմի ափի այգիներուն վրա կտատանէին:

Օղիով սկսան: Գավաթները կլեցվէին, ու աղաները թե կխմէին թուրթի օղին, և թե մատներով կառնէին մեղրի մեջ թաթխված չոր սերի կտորները ու կուտէին:

Վարդանը կանչող մը չէր եղեր, ինքնիրենը ան ալ այդ օրը ելեր, մինչև այգիները եկեր էր, փորը կշտացնելու հույսով:

Ատանկ տեղ մը Վարդանի պես մեկն ալ պետք էր: Ջուր կբերեր, օճախներուն կհսկեր, հոս-հոն կդրկվէր:

Աղաները, տեսնելով, որ Վարդանն ալ կդեգերի իրենց շուրջը, գոհ եղան ու ըսին.

– Աֆերիմ Վարդան, աղեկ խելք ըրեր ես ու եկեր ես, Ալիքսանը թող կերակուրներուն նայի, դուն ալ անասուններուն մոտ գնա նստե, որ տեղ մը չերթան, չելլենք ետքն ալ անոնք փնտրենք:

Աղաները հետիոտն եկած չէին: Ձի, ջորի, էշ, ով ինչ ուներ՝ հեծեր ու եկեր էին: Վարդան գնաց, անոնց մոտ նստավ: Վարը այգիները տերևագուրկ

էին, ու հանդիպակաց ավագուտքի մը մեջէն առատ ու հստակ ջուր մը կուգար ու կմիանար գետին: Վարդան ուշադրություն անգամ չէր ըներ այս բաներուն: Աղաներուն սեղանին կնայեր:

Ճաշկերույթը հաջորդեց:

Սպիտակ թաղիքով, ծխելէն դեղնած պէխերով, Ալիքսանը շամփուրի խորովածներ բերավ ու փողցին վրա՝ երեք տեղ, ափսէները լեցուց:

Միսերուն տաք ու ախորժաբեր շոգին բարձրացավ ամաններէն: Վարդանին ախորժակը գրգռվեցավ, ու սպասեց, որ աման մըն ալ բերեն, իր առաջքը դնեն, ու՝ կեր ըսեն: Ոչ ոք զինքը հիշեց, սակայն: Աղաները թէ կատակելով կխոսէին և թէ՛ թաթախուն մատներով միսերը կկտրէին ու կուտէին:

Պարպկեցան ամանները:

Վարդան վիրավորվեցավ այս բանէն:

– Աղէկ, – մտածեց, – ես հոս իրենց անասունները պահեմ, իրենք ալ հոն քեֆ ընեն:

Նախորդ տարվան գառերէն՝ երկու կարմրած, ամբողջական գառեր բերին ու նորէն՝ փողցին վրա դրին: Գառերուն փորերը ձավարով լեցված էր:

Ալիքսանը իր դեղին մատներովը բաժնեց զանոնք, մասերու վերածեց, ու աղաները կերան ու կերան: Հացին, փիլավին նայող չկար. ոսկորներն ալ շատ չէին կրծեր, լիքը, փափուկ միսերը լափեցին:

Վարդան տեսնելով, որ նորէն զինքը մոռցան, գայրացավ, մտքովը հայիոյեց:

– Հուդա ըլլամ՝ որ ձեռք զարնեմ անոնց կերածին: Ալ ասկէ ետքը, կանչելու ալ ըլլան, չպիտի երթամ, առաջքս բերեն դնեն, կեր՝ ըսեն, զոռ ընեն, չպիտի ուտեմ, – վճռեց:

Ու երեսը դարձուց, այգիներուն նայեցավ:

Յուդի մեջ տապկված, մեղրը թաթխված բարակ խմորեղեններ բերին: Աղաները պլորեցին, պլորեցին ու կերան:

Անոնցմէ մէկը, ինչպէս եղավ, հիշեց Վարդանը, ու կանչեց:

– Վարդան:

Վարդան դժկամությամբ դարձավ ու, ուղտը պայտողին ինչպէս կնայի, այնպէս նայեցավ:

– Վարդան, աս ալ դուն կեր, – ըսավ, խմորեղենի թերթ մը երկարելով: Որոշած ըլլալով չուտել Վարդան պատասխանեց.

– Չէ, չեմ ուտեր, Գևորգ աղա:

– Ծո, պիշին մարդ չուտե՞ր, առ կեր, – միջամտեց ուրիշ մը:

– Չէ. Ավետիս աղա, չեմ ուտեր, – պնդեց Վարդան:

Իր բարկությունը չհայտնեց:

– Վարդանը պիշի չուտեր, – կրկնեցին աղաները միաբերան:

– Չեմ ուտեր, Հա՛, – մենախոսեց, – Վարդանը պիշի չուտեր, Վարդանը պիշի ուտել գիտե՞: Ինձի պես ավանակը, որ եկեր է ու ձեզի խզմեթ կընե:

Ու գրգռված աղաներուն հեգնությունեն, գլուխը կախեց ու սկսավ մատներովը գետինին ավազները, խիճերը խառնել:

Սուրճերը Կամուրջին այգիները պիտի խմեին:

Արեգջեռ ժայռերուն ստորոտը աղբյուր մը կար, ընտիր ջուրով: Հոն կրակ պիտի վառեին, սուրճ ու ջուր պիտի խմեին: Կամուրջին, գետին ու գետափնյա այգիներուն տեսարանը պիտի վայելեին:

Աղաները հեծան իրենց անասուններն ու մեկնեցան:

Ալեքսանն ու ծառան ալ եկան:

– Վարդան աղբար, մենք ալ կերթանք: Կրակ պիտի վառենք, աղաներուն խահվե պիտի եփենք: Ալ գործչմնաց հոս: Մեզի հետ գաս ի՞նչ պիտի ընես հոն: Փիլավ կա, հաց կա, նստե, փորդ կշտացուր, փոռցն ալ հետդ առ ու գեղ գնա հոսկե:

Վարդան խոսելու տրամադրություն չունենալով հանդերձ պատասխանեց

– Պիտի երթաք՝ գացեք, ինձի ի՞նչ կհարցնեք:

Երբ անոնք հեռացան ու ինք մինակ մնաց, ոտքի ելավ, թեն անոթի էր, բան չդրավ բերանը, երդումը պահելու հաստատ որոշումով: Փոռցը ծրարեց, փիլավն ու հացը մեջը, ու ճամբա ելավ:

Գյուղ հասնելով, շիտակ Հաճի Ներսես աղային տունը գնաց, շալակին կապոցը տնեցիներուն տվավ, ու դուրս ելավ, առանց բան մը ըսելու:

Աղաները դեռ չէին եկեր այգիներեն:

Գյուղամեջը երիտասարդները կայներ էին պատի մը տակ կարգով ու կխոսեին, Վարդան չուզեց, որ անոնց առաջքեն անցներ, բայց ի՞նչ ըներ, տեսան զինքը, ետ դառնալ ալ չէր ըլլար:

– Դո՞ւն ալ ասօր Ջերման էիր, Վարդան աղբար, աղաներուն հե՞տ էիր, մի՛ պահեր ըսին տղաքը:

– Է հա, ի՞նչ կա, ի՞նչ պիտի պահեմ պատասխանեց Վարդան դժկամությամբ:

– Հե՛ջ... կհարցնենք, – ըսին, – շատվո՞ր էիք, քանի՞ հոգի էիք:

– Համբելու չէի՞ յա, կային, շատվոր էին:

Երիտասարդները հետաքրքրվեցան:

- Ինտո՞ր եղավ, որ դուն մինակ եկար, աղանե՞րը ինչ եղան:
- Պոչերնին փակելու, կենալու չէի՞ յա, - ըսավ, - անոնք ալ կուգան հարկավ: Անոնք Կամուրջին էգիները գացին, ես ելա եկա:
- Վարդան աղբարը հետերնիս խոսիլ ալ չուզեր, - նկատեցին տղաքը:
- Անանկ է յա, աղաներուն հետ սերն ու մերդը, գառերը կերավ:

հարկավ՝ մեր երեսը չնայիր:

- Շիտակ է, կերա, դո՞ւք ինչու կեցաք հոս, թող դուք ալ գայիք, որ ուտեիք, - պատասխանեց:

Իրիկվան ցուրտը սկսած էր: Ոտքերը թրջած՝ ճամբուն ձյուններէն, կմսեր ամբողջ մարմինովը:

Տուն գնաց, կինը թոնիրին թաղարը կրակ լեցուցած էր, մտավ մինչև վիզը մեջը ու պառկեցավ: Աչքերը բաց, առիքին գերաններուն ու մարդակներուն նայեցավ:

- Վարդանը պիշի չուտեր, Վարդանը հեչ պիշի կուտե՞, - կրկնեց ինքնիրեն: Աղաներուն հեգնությունը մտքէն չէր ելլեր:

Ի՞նչ կըսես դուն քեզի, - հետաքրքրվելով հարցուց իր կինը, որ նույնպէս թոնիրին դեմի կողմը եկավ ու նստավ, ու իր ամուսինին կնայեր, - որո՞ւ հետ կխոսիս:

- Բան չկա, հեչ, ես ինծի հետ կխոսիմ, - պատասխանեց Վարդան ու լռեց:

Հետևյալ առտու աղաները ժամէն ելեր էին խմբովին, փողոցը իրեն հանդիպեցան:

- Ծո Վարդա՛ն, երեկ ե՞րբ տուն եկար, մենե առա՞ջ, թե՞ մենե ետքը, - հարցուց Հաճի Ներսէս աղան:

- Առաջ եկա, - պատասխանեց Վարդան, գլուխը կախած, գետինը նայելով:

- Փորդ կշտացուցի՞ր աղեկ մը:
- Կշտացուցի պատասխանեց Վարդան ու լռեց:
- Փիլավն ու հացերը մեր տունը բերեր էիր, աղ ինտո՞ր ուտել է, ծո տղա, - ըսավ Հաճի Ներսէս աղան, - թող ձերը տանէիր, տղաքդ կուտեին:
- Է՛հ, իշտե, չտարի, - ըսավ Վարդան:
- Անանկ մըն ալ քթիդ առաջքէն կխոսիս, որ գիտես քի՛ սրդողեր ես, -

ավելցուց Հաճի Ներսէս աղան, – ծո երթալով աղէկ մը քիպար դարձար:

Վարդան չպատասխանեց: Աղաները Հեռացան:

– Քիպար դարձա, ի՞նչ գիտցար: Սերը, գառները, պիշին դուք ուտեք, ոսկորներն ու չոր փիլավն ալ ես: Անոթի կմնամ՝ չեմ ուտեր:

Ու գլուխը կախ, մենախոսելով, քալեց: